

# Newsletter

## Delegation of the European Union to Armenia

July/August 2010 #3

Focus On/խոչոր պլան

### Negotiations on Association Agreement with the EU launched

The first round of negotiations on an Association Agreement between the EU and Armenia started on 19 July in Yerevan. The main objective of the Association Agreement is to achieve closer political and economic association between the EU and Armenia. "This is ambitious and ambitious needs time to get things right. We want to get a good agreement with lasting effects for all citizens," said Gunnar Wiegand, the head of the EU negotiating team, in reply to questions regarding the timeline for completing

negotiations.

The agreement will foster economic integration to provide standardization and free access to the respective markets. According to Wiegand it "will give Armenia an opportunity to become an attractive field both for domestic and foreign investors". He also noted the EU is expecting a mandate from its Member States on visa facilitation and visa readmission agreements, in order to get Armenia ever closer to the EU.

The Association Agreement negotiations will take place in the form of full sessions and working groups. They will cover a wide range of areas, including political dialogue, justice, freedom and security, as well as trade and cooperation in sectoral policy. The coordinator of the Armenian negotiating team is Foreign Minister Edward Nalbandyan. The second round will take place in Brussels in October. Negotiations on Association Agreement were also launched in Georgia and Azerbaijan in the preceding days.

### Մեկնարկել են Ասոցիացիայի համաձայնագրի բանակցությունները

ԵՄ - Հայաստան Ասոցիացիայի համաձայնագրի շուրջ բանակցությունների առաջին փուլը մեկնարկել է հուլիսի 19-ին Երևանում:

Ասոցիացիայի համաձայնագրի հիմնական նպատակը ԵՄ-ի և Հայաստանի միջև առավել սերտ տնտեսական կապեր հաստատելն է: «Այն համարձակ է, իսկ նպատակին հասնելու և իրերի ճիշտ դասավորության համար ժամանակ է պահանջվում», - նշել է ԵՄ բանակցությունների ղեկավար Գունար Վիգանը՝ պատասխանելով բանակցությունների վերջնաժամկետի մասին հարցին:

Համաձայնագիրը կիսանդամ տնտեսական ինտեգրացիոն միջազգային չափորոշիչների հետ միօրինակացման և համապատասխան շուկաներ ազատ մուտք ապահովելու նպատակով: Ըստ Վիգանի՝ «այն հնարավորություն կընձեռնի Հայաստանին ավելի գրավիչ դառնալու ներդրումների համար»: Նա նշել է նաև, որ ԵՄ-ն ակնկալում է մանրատ

ստանալ անդամ-պետություններից՝ վիզաների դյուրացման և մուտքի բազմակի վիզաների համար արտոնություններ տրամադրելու վերաբերյալ, որն ավելի կմերժեցնի Հայաստանը Եվրամիությանը:

Ասոցիացիայի համաձայնագրի բանակցությունները տեղի են ունենալու լիազուրկ միաստիկ և աշխատանքային խմբերի ձևաչափով: Բանակցությունները ընդգրկելու են ոլորտների լայն շրջանակ՝ քաղաքական երկխոսություն, արդարադատություն, ազատություն և անվտանգություն, ինչպես նաև առևտուր և համագործակցություն՝ ոլորտային քաղաքականության բնագավառում: Հայկական կողմի բանակցային թիմի համակարգողն է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Բանակցությունների երկրորդ փուլը տեղի կունենա հոկտեմբերին Բրյուսելում: Ասոցիացիայի համաձայնագրի շուրջ բանակցություններ են մեկնարկել նաև Վրաստանում և Ադրբեյջանում:



**In this Issue** / **Այս համարում**

- Rehabilitation Centre in Vayots Dzor / Վերականգնողական կենտրոն Վայոց ձորում
- EU institutions: European Council / ԵՄ ինստիտուցիաներ. Եվրոպական խորհուրդ
- Lunar clock on GMT peninsula / Լուսնային ժամացույց Գրինվիչ թերակղզում

EU Success/ԵՄ հաջողություններ

### EU diplomatic service: EEAS

On 26 July the Council of the European Union adopted a decision on establishing the European External Action Service (EEAS) and set out its organisation and functioning. The creation of the EEAS became one of the most significant changes introduced by the Treaty of Lisbon, which entered into force on 1 December 2009. It is aimed at making the EU's external action more coherent and efficient, thereby increasing the EU's influence in the world.

The EEAS will assist the High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy Catherine Ashton in fulfilling her mandate. It will work in cooperation with the diplomatic services of the member states and comprise officials from relevant departments of the General Secretariat of the Council and of the Commission, as well as the staff seconded from the national diplomatic services of the member states.

Throughout the first half of 2010, Ashton sought agreement between the Council, the Parliament and the Commission as to the future shape of the EEAS. The Commission wanted to retain many of its existing competencies, while the Parliament wanted oversight over the EEAS through scrutiny over appointments and budgets. The High Representative submitted her proposal on the structure of the EEAS and a political agreement was reached in April at the General Affairs Council. The proposal was adopted by the European Parliament by a large majority on 8 July.

"We can now move forward to build a modern, effective and distinctly European service for the 21st century" shared Ashton. Formally the EEAS will come into being by the first anniversary of the Lisbon Treaty.



### ԵՄ դիվանագիտական ծառայություն. ԱԳԵԾ

Հուլիսի 26-ին ԵՄ խորհուրդը Արտաքին գործերի եվրոպական ծառայություն (ԱԳԵԾ) ստեղծելու որոշում է ընդունել և մանրամասնել դրա կազմակերպման ու գործունեության հարցերը: ԱԳԵԾ-ի ստեղծումը դարձավ Լիսաբոնյան համաձայնագրով առաջարկված կարևորագույն փոփոխություններից մեկը, որն ուժի մեջ է մտել 2009թ. դեկտեմբերի 1-ին:

Նախագծի նպատակը միասնական Եվրոպայի արտաքին քաղաքական ապարատի գործունեության արդյունավետության բարձրացումն է, ինչը կնպաստի ԵՄ-ի ազդեցության մեծացմանը ողջ աշխարհում:

ԱԳԵԾ-ն կօժանդակի ԵՄ Արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնին իր գործառնությունները իրականացնելու հարցում: Այն կգործի անդամ պետությունների դիվանագիտական ծառայությունների, ինչպես նաև ազգային դիվանագիտական ծառայություններից գործուղված աշխատակազմի հետ համատեղ, իր կազմի մեջ կընդգրկի պաշտոնյաներ՝ Եվրոպական խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի Գլխավոր քարտուղարությունների համապատասխան գերատեսչություններից:

2010 թվականի առաջին կեսին Էշթոնը ստորագրել է համաձայնագիր՝ խորհրդի, խորհրդարանի և Հանձնաժողովի միջև՝ ԱԳԵԾ-ի ապագա ձևաչափի վերաբերյալ: Հանձնաժողովի ցանկությունն իր ներկայիս իրավունքները պահպանելն էր, իսկ խորհրդարանինը՝ ԱԳԵԾ-ի գործունեության հսկողությունը՝ դրանում կադրային նշանակումների ու բյուջեի վերահսկմանը: Գերագույն ներկայացուցիչը հանձնեց ԱԳԵԾ-ի կառուցվածքի իր առաջարկը, իսկ քաղաքական համաձայնությունը կայացվեց ապրիլի 28-ին Ընդհանուր հարցերով զբաղվող խորհրդում: Առաջարկը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվեց Եվրոպական խորհրդարանում հուլիսի 8-ին:

«Այժմ մենք կարող ենք կառուցել 21-րդ դարի ժամանակակից, արդյունավետ և, միանշանակ, եվրոպական ծառայություն», - ասել է Էշթոնը: Փաստափորձն ԱԳԵԾ-ն ուժի մեջ կմտնի Լիսաբոնյան համաձայնագրի տարելիցին:

Info/հնձն

On 4 August 2010 **Bronislaw Komorowski**, member of the "Civil Platform" party, ruling from early 2007, **was elected as president as a result of early presidential elections in Poland**, with 53% of the vote. Komorowski's opponent at the second round of the elections who got 47% of the vote was Jaroslaw Kaczynski, twin brother of the late president Lech Kaczynski.

A plane crash near the city of Smolensk on 10 April led to the death of the Polish leader Lech Kaczynski, his wife, numerous statesmen, military officers and diplomats.

2010թ. օգոստոսի 4-ին **Լեհաստանում** արտահերթ նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, ձայների 53%-ով, **Նախագահ է ընտրվել Բրոնիսլավ Կոմորովսկին**՝ դեռևս 2007 թ.-ից Լեհաստանում կառավարող «Քաղաքացիական պլատֆորմ» կուսակցությունից: Երկրորդ փուլում նրա մրցակիցն էր ավիավթարում զոհված նախագահ Լեխ Կաչինսկու երկվորյակ եղբայր Յարոսլավ Կաչինսկին, որին ձայն էր տվել ընտրողների 47%-ը: Ապրիլի 10-ին Սմոլենսկի մոտ ավիավթարի հետևանքով զոհվել էին լեհ առաջնորդ Լեխ Կաչինսկին, նրա կինը, մեծ թվով պետական գործիչներ, զինվորականներ և դիվանագետներ:

# Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Հուլիս/օգոստոս 2010 #3

**Natural disasters and protection against them.**

A Disaster Risk Reduction DIPECHO regional project, with a goal to raise the level of preparedness in disaster-prone regions was launched in Armenia on 8 July. "The South Caucasus is highly exposed to natural hazards" said Onno Simons, the head of the Political, Economic, Press and Information section of the EU Delegation to Armenia, stressing that Armenia is particularly prone to natural disasters. From 2003 to 2007 718 natural disasters were registered on the territory of Armenia, causing the destruction of settlements and cultivated land. With an overall aim to help people prepare and cope better with disasters, the European Commission Humanitarian Aid Department has assigned € 2 million for the implementation of DIPECHO projects in Armenia, Georgia and Azerbaijan. In Armenia the implementation of the programme already started in the regions of Vayots Dzor and Tavush: schools have been equipped with means of fire-prevention and first aid, teachers and pupils have been trained how to act in extraordinary situations and evacuation studies have been conducted. Information booklets have also been disseminated.

In Armenia, the disaster preparedness programme is implemented by the Armenian Red Cross Society, OXFAM GB Armenian branch and UNICEF Armenia.

**Բնական աղետներ ու պաշտպանություն դրանցից**

Հայաստանում հուլիսի 8-ին մեկնարկել է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի Աղետների ռիսկերի նվազեցման տարածաշրջանակին ծրագիրը (DIPECHO), որի նպատակն է բարձրացնել աղետներին դիմակայելու պատրաստվածության մակարդակը: «Հարավային Կովկասում բնական աղետների մեծ հավանություն կա», - ասել է Հայաստանում Եվրամիության պատվիրակության քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավար Օնո Սիմոնսը՝ շեշտելով հատկապես Հայաստանի հավանությունը բնական աղետներին: 2003-2007 թ.թ. ընթացքում ՀՀ տարածքում 718 տարերային աղետ է գրանցվել, որոնց հետևանքով տուժել են բնակավայրեր և մշակովի հողատարածքներ:

Հետապնդելով մեկ ընդհանուր նպատակ՝ օգնել մարդկանց նախապատրաստվելու բնական աղետներին և ավելի արդյունավետ դիմակայելու դրանց, Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժինը հատկացրել է 2 միլիոն եվրո՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում DIPECHO ծրագրերի իրականացման համար:

Հայաստանում ծրագիրն արդեն իսկ իրականացվել է Վայոց ձորում և Տավուշում. դպրոցները զինվել են առաջին օգնության և հակահրդեհային միջոցներով, ուսուցիչներին ու աշակերտներին փոխանցվել են արտակարգ իրավիճակներում գործելու գիտելիքներ, անցկացվել են տարահանման ուսումնական միջոցառումներ: Մարզերի բնակիչներին բաշխվել են տեղեկատվական գրքույկներ: Աղետների նախապատրաստման ծրագիրը Հայաստանում իրականացնում են Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, «Օքսֆամ ԱԲ» հայաստանյան մասնաճյուղը և UNICEF-ի հայաստանյան գրասենյակը:



**Armenian Public Financial Management reforms**

The second round of reforms of the management of the Armenian Public Finance system was discussed in Yerevan on 16 June. The objective of reforms envisaged during the next ten years, is to enhance the efficiency of managing public expenses. "We support reforms which will not only modernize the public financial system, but, controlling the expenses, will also restrain corruption", said Raul de Luzenberger, the Head of the EU Delegation to Armenia.

Within the scope of the workshop, participants also discussed the international experience on the PFM system reforms and best practices, including the Public Internal Financial Control (PIFC). PIFC focuses on harmonising the public sector's internal control system with international standards. This model could be introduced as a new mechanism in the Armenian PIFC system.

Among the participants of the workshop were Prime Minister Tigran Sargsyan, Minister of Finance Tigran Davtyan and Asad Alam, the Country Director of the South Caucasus Countries Department at the World Bank.

**Հայկական պետական ֆինանսական կառավարման բարեփոխումներ**

Պետական ֆինանսական կառավարման(ՊՖԿ) համակարգի բարեփոխումների վերաբերյալ երկրորդ փուլի քննարկումները տեղի են ունեցել հունիսի 16-ին Երևանում: Բարեփոխումների նպատակը հաջորդ տասը տարվա ընթացքում պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացումն է: «Մենք պաշտպանում ենք այն բարեփոխումները, որոնք, վերահսկելով ծախսերը, ոչ միայն կարողանան ավելացնել պետական ֆինանսական համակարգը, այլև կնվազեցնեն կաշռակերությունը», - ասել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուզենբերգերը:

Աշխատանքային սեմինարի շրջանակներում մասնակիցներն անդրադարձել են նաև ՊՖԿ համակարգի բարեփոխումների իրականացման միջազգային փորձին և լավագույն օրինակներին, այդ թվում՝ պետական ներքին ֆինանսական հսկողությանը (ՊՆՖՀ): ՊՆՖՀ-ն ուղղված է պետական հատվածի ներքին վերահսկողության համակարգը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելուն: Այս մոդելը կարող է դիտարկվել որպես նոր մեխանիզմ՝ Հայաստանի ՊՆՖՀ համակարգում կիրառելու համար:

Սեմինարին մասնակցել են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը և Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Ասադ Ալամը:

**EU Advisory Group Board meeting**

On 11 June the EU Advisory Group presented its progress report during the 4<sup>th</sup> EU Advisory Group Board Meeting. After its first year of activities, the group's contribution to the Armenian reform agenda was positively assessed by the members of the Advisory Board.

"The experiment of the EU Advisory Group is a success, and Armenian experience will be used in the work with other countries of the Eastern Partnership. I suppose we mustn't hide the difficulties, which we collided with, and there is still work to be done," said the Head of the EU Delegation to Armenia Raul de Luzenberger. The Secretary of the National Security Council Artur Baghdasaryan mentioned as positive achievements the establishment of the Diplomatic Academy, as well as reforms in the field of trade. He expressed hope that the latter would lead to establishing a free trade agreement with the EU, thus allowing Armenian businessmen to export their products to the EU markets without any obstacles.

**ԵՄ Խորհրդատվական խմբի հաշվետու նիստը**

ԵՄ Խորհրդատվական խումբն (ԽԽ) իր աշխատանքային հաշվետվությունը ներկայացրել է հունիսի 11-ին չորրորդ նիստի ընթացքում: Խորհրդատվական խմբի անդամները դրական են գնահատել իրենց մեկամյա գործունեությունը Հայաստանի բարեփոխումների ոլորտում: «ԵՄ Խորհրդատվական խմբի փորձը հաջողված է, և հայաստանյան փորձը կիրառվի Արևելյան համագործակցության այլ երկրներում նույնպես: Կարծում են, որ պետք չէ քաջացնել նաև այն դժվարությունները, որոնց բախվել ենք, և դեռ որոշակի աշխատանք կա անելու», - ասել է Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լուզենբերգերը: Որպես ձեռքբերում՝ Հայաստանի ազգային անվտանգության Խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշել է Դիվանագիտական ակադեմիայի հիմնումը, ինչպես նաև լուրջ բարեփոխումներն ազատ առևտրի ոլորտում: Նա հույս է հայտնել, որ վերջինս կնպաստի Եվրամիության հետ ազատ առևտրի համաձայնագրի հաստատմանը, որպեսզի Հայաստանի գործարարները հնարավորություն ունենան իրենց արտադրանքն անարգել արտահանել Եվրոպական շուկա:



**The European market is open for Armenian producers**

On 1-2 July an information workshop aimed at promoting the access of Armenian products to the European market took place in Yerevan and Ijevan. Armenian businesses were informed about ways to export to the EU. They were given in-depth briefing on the "GSP+" Generalized System of Preferences that Armenia benefits from. Through GSP+, EU Member States offer developing countries an advantageous access to the EU market (0% or nearly 0% import tariffs). To facilitate the information flow, the EU has prepared an information tool, "The Export Helpdesk" website (<http://exporthelp.europa.eu>), which is free and allows potential exporters to find details on how to get access to the European market. The seminar's goal was to assist Armenian producers in organising the export of their products properly. "It is really very important for Armenian producers to meet the EU standards for regulation. Only in that case their products can be competitive in Europe", noted Maryse Coutouradis, the Policy Coordinator for the Export Helpdesk in the European Commission.

**Եվրոպական շուկան բաց է հայ արտադրողների համար**

Հայ գործարարների արտադրանքը եվրոպական շուկա արտահանելուն նպաստելու նպատակով հուլիսի 1-2-ը Երևանում և Իջևանում անց է կացվել տեղեկատվական աշխատաժողով: Հայ արտադրողներին ներկայացվել են ԵՄ արտահանման ուղիները: Ճեպագրույցի ժամանակ նրանք ծանոթացել են «ԱԸՀ+» արտոնությունների ընդհանրացված համակարգին, որից օգտվում է Հայաստանը: «ԱԸՀ+»-ի միջոցով ԵՄ անդամ-պետությունները ԵՄ շուկա մուտքի գրոյական կամ գրեթե գրոյական մաքսատուրքերով արտոնյալ պայմաններ են առաջարկում զարգացող երկրներին: Տեղեկատվական հոսքը հեշտացնելու նպատակով ԵՄ-ն մշակել և ստեղծել է նաև տեղեկատվական մի գործիք և՛՝ «Արտահանման տեղեկատու» կայքը (տես՝ <http://exporthelp.europa.eu>), որը գործում է անվճար և արտահանողներին տրամադրում է եվրոպական շուկա մուտք գործելու վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Աշխատաժողովի նպատակն էր աջակցել հայ արտադրողներին՝ ճիշտ և գրագետ կազմակերպելու իրենց արտադրանքի արտահանումը: «Շատ կարևոր է, որպեսզի հայ արտադրողը համապատասխանեցնի իր արտադրանքի որակը եվրոպական շուկայի չափանիշներին: Միայն այդ դեպքում նրա առաջարկած ապրանքատեսակը մրցունակ կլինի Եվրոպայում», - նշել է Եվրոպական հանձնաժողովի Արտահանման տեղեկատվական քաղաքականության համակարգող Մարիզ Բուդսուրադիզը:



## Empowering young women in rural areas

For a society to develop and progress, women's role needs to be respected within. Even though Armenian legislation refers to women's rights, legal aspects and daily habits often clash. Today many women remain uninformed about their rights and find their activities constrained, particularly in the regions and rural communities.

In order to promote women's role in society, the Civil Society Development Center NGO initiated a programme for "Empowering young women in rural areas" with the support of the EU. Its long-term objective is to assist democratic development through civil education, and help women become proactive citizens. The programme was launched in 2009 and will last until March 2012. Participants are girls and young women aged between 17 and 25 from mainly vulnerable families in 31 Armenian cities and rural communities.

The programme is particularly important for these communities, because it is there that women's unemployment reaches a peak. The regions have the lowest level of business controlled by women-entrepreneurs and women in general do not participate in the socio-economical development of the community sufficiently. To involve as many participants as possible, CSDC organised initial visits to all cities and the country side and acquainted the target group with the concept of the programme.

Activities have so far included seminars on human rights, gender equality, leadership as well as workshops on funding and leading teams. Trainings of trainers, sessions in Yerevan, and publishing training materials and books were also organised in the scope of the programme. The seminars have helped young women discover their abilities and aspire to be active participants in civil society and get involved in public development. The workshops allowed women "express their own thoughts and opinions freely and easily, an essential factor in self-assertion," stressed Oksana Veziryan and Susanna Hakobyan from the "Yerkyak" Youth NGO.

Results until now have also inspired ideas for future cooperation among young women. "As a continuation of the programme, establishing schools for women leadership in the regions of Armenia would be appreciated" suggested Aida Atabekyan from Dilijan. Others suggested organising future training focusing on women's rights protection.



## Երիտասարդ կանանց հզորացում գյուղական համայնքներում

Որպեսզի հասարակությունը զարգանա և առաջընթաց ապրի, կինը պետք է լինի հարգված: Թեև ՀՀ օրենսդրությունը անդրադառնում է կանանց իրավունքներին, սակայն օրենքն ու առօրյա սովորույթները հաճախ բախվում են: Այսօր շատ կանայք շարունակում են անտեղյակ մնալ իրենց իրավունքների մասին և կաշկանդված՝ իրենց գործողություններում, հատկապես մարզերում ու գյուղական համայնքներում:

Հասարակության մեջ կնոջ դերը բարձրացնելու նպատակով՝ «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» ՀԿ-ն, ԵՄ ֆինանսավորմամբ, նախաձեռնել է «Երիտասարդ կանանց հզորացում գյուղական համայնքներում» ծրագիրը: Դրա հեռահար նպատակն է՝ նպաստել ժողովրդավարական զարգացմանը քաղաքացիական կրթության միջոցով և օգնել կանանց՝ դառնալու ակտիվ քաղաքացի: Ծրագիրը մեկնարկել է 2009 թվականին և կտևի մինչև 2012 թվականի մարտ ամիսը: Մասնակիցները ՀՀ տասը մարզի 31 քաղաքների ու գյուղական համայնքների 17-25 տարեկան աղջիկներ ու երիտասարդ կանայք են, հիմնականում՝ անապահով ընտանիքներից:

Ծրագիրը հատկապես կարևոր է մարզերի և գյուղական համայնքների համար, քանի որ հենց այստեղ կանանց գործազրկությունը հասնում է մեծ չափերի: Մարզերում գրանցվում է կանանց ղեկավարությամբ ձեռնարկատիրական գործունեության ցածր մակարդակ և կանայք, հիմնականում ոչ բավարար մասնակցություն են ցուցաբերում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում:

Ծրագրում հնարավորինս առավելագույն թվով մասնակիցներ ընդգրկելու նպատակով ՔՀԿ-ն կազմակերպել է նախնական այցեր բոլոր քաղաքներ ու գյուղեր և նպատակային խմբերին ծանոթացրել ծրագրի գաղափարին:

Ծրագրի շրջանակներում, մինչ այժմ, գործունեությունը ներառում էր սեմինարներ՝ մարդու իրավունքների, սեռական հավասարության, առաջնորդ դառնալու վերաբերյալ, նաև աշխատաժողովներ՝ թմի ստեղծման և ղեկավարման վերաբերյալ, վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներ, նստաշրջաններ երևանում, ինչպես նաև հրատարակվել էին նյութեր ու գրքեր դասընթացների վերաբերյալ: Շնորհիվ այդ սեմինարների՝ երիտասարդ կանայք կարողանում են բացահայտել սեփական հնարավորությունները, ձգտում են ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքացիական հասարակության կյանքում և ներգրավված լինել հասարակության զարգացման գործընթացում: Այդ սեմինարներն օգնել են կանանց՝ «մտքերն ու կարծիքներն ազատ և անկաշկանդ արտահայտել, ինչը կարևոր գործոն է ինքնահաստատման ճանապարհին»,- նշել են Օքսանա Վեզիրյանը և Սուսաննա Հակոբյանը՝ «Երկյակ» երիտասարդական ՀԿ-ից:

Արդյունքները ոգեշնչում են երիտասարդ կանանց՝ միջև ապագա համագործակցության գաղափարների առումով: «Որպես ծրագրի շարունակություն, ողջունելի կլինեն կին առաջնորդների դպրոցների ստեղծումը հանրապետության մարզերում՝ կիրառելով առավել մրցունակ կին առաջնորդների ընտրության և ուսուցման սկզբունքը»,- առաջարկել է Արդա Աբաբեկյանը՝ Դիլիջանից: Մյուսներն առաջարկել են կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ ուսումնական դասընթացների կազմակերպում:

## Healthcare and Rehabilitation Centre in Vayots Dzor

### Առողջության պահպանման և վերականգնողական կենտրոն Վայոց ձորում

A Healthcare and Rehabilitation Centre financed by the EU will start functioning in Vayots Dzor on 16 September 2010. The centre was created to target one of the core aspects of the EU Poverty Reduction Strategy - improving health protection. The project was funded with € 330 000. Launched in 2009, the programme involved the construction of the building, which is now almost completed and will be operational in September. Within the scope of the programme, the Centre will welcome 950 people per year. Arshavir Bayatyan, the president of "Vayots Dzor NGOs Association" implementing the project, shared the objectives and the goals of the Centre:

**- Why was this project designed for the Vayots Dzor community in particular?**

- Everyone knows the differences between Yerevan, the capital, and the regions that can be traced in all aspects including healthcare. A number of public discussions organised by the Yeghegnadzor Municipality confirmed that the Vayots Dzor community faces serious problems in the social and healthcare areas. The healthcare services and disease prevention awareness are not at sufficient levels, while medical services in Yerevan are either difficult to access, or expensive. The situation is particularly difficult for the vulnerable part of the population: single mothers, children and the elderly. Our project is aimed at improving the healthcare in Vayots Dzor.

**- What are the aims of the project?**

- To boost the development of healthy lifestyle in Vayots Dzor, the project will offer affordable and high quality diagnostic medical care to the community, especially to destitute and vulnerable people. The benefit of the option we suggest is in diagnostics, since preventing is more affordable and more effective than treating.

**- What services does the Centre offer?**

- The Centre will offer therapeutic physical training, aqua therapy, massage, and swimming, as well as psychotherapy services for the vulnerable part of population. The staff will be trained in Yerevan and will include 6 specialists: 2 swimming trainers, a trainer for training equipment, a hospital nurse, a doctor and a psychologist.

**- Who can attend the Centre? What are the conditions required?**

- The Centre is designed to provide the vulnerable part of the population with service for free, yet after the completion of the programme, it will continue functioning at discount prices. Services will also be available to the rest of population, but they will have to pay for them. The money will be used for managing the Centre.



ԵՄ ֆինանսավորման շնորհիվ այս տարվա սեպտեմբերի 16-ից Վայոց ձորում կգործի Առողջության պահպանման և վերականգնողական կենտրոն: Կենտրոնը ստեղծվել էր Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) հիմնական ուղղորդներից մեկի՝ առողջապահության վիճակի բարելավման համար:

Ծրագրի համար հատկացվել է 330 000 եվրո: 2009 թվականին մեկնարկած ծրագիրն, իր մեջ ներառել է նաև շինարարական աշխատանքները, որոնք գրեթե ավարտված են: Կենտրոնը շահագործման կհանձնվի սեպտեմբերին: Մեկ տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում կենտրոնի ծառայություններից կօգտվի 950 մարդ: Կենտրոնի առջև դրված խնդիրների ու նպատակների մասին պատմել է ծրագիրն իրականացնող «Վայոց ձորի հասարակական կազմակերպությունների ասոցիացիա»-ի նախագահ Արշավիր Բայաթյանը:

**- Ինչու է այս ծրագիրը մշակվել հարկապես Վայոց ձորի համայնքի համար:**

- Բոլորին քաջ հայտնի է, թե ինչ տարբերություններ կան մայրաքաղաք Երևանի և մարզերի միջև: Դրանք նկատելի են բոլոր ոլորտներում, այդ թվում՝ առողջապահության: Եղեգնաձորի քաղաքապետարանի կազմակերպած մի շարք հանրային քննարկումների արդյունքում հաստատվել է, որ Վայոց ձորի բնակչությունը լուրջ խնդիրներ ունի սոցիալական և առողջապահական ոլորտներում: Մարզում առկա առողջապահական ծառայությունները և հիվանդությունների կանխարգելման ուղղված իրազեկվածությունը բավարար մակարդակի վրա չեն, մինչդեռ Երևանում ծառայություններ ստանալը կամ դժվար հասանելի է, կամ էլ՝ թանկ: Սա հատկապես նկատելի է կարիքավոր խմբերի՝ միայնակ մայրերի, երեխաների և ծերերի համար: Մեր ծրագիրն ուղղված է Վայոց ձորում առողջապահության վիճակի բարելավմանը:

**- Որո՞նք են ծրագրի նպատակները:**

- Վայոց ձորում առողջ ապրելակերպի զարգացմանը խթանելու նպատակով ծրագիրն առաջարկելու է բարձրորակ կանխարգելիչ առողջապահական ծառայություններ համայնքի բնակիչների, հատկապես՝ կարիքավոր խմբերի համար: Խնդրի լուծման մեր առաջարկած տարբերակի առավելությունը կանխարգելիչ բնույթն է, քանի որ ավելի մատչելի ու արդյունավետ է հիվանդության կանխումը, քան բուժումը:

**- Ի՞նչ ծառայություններ է առաջարկելու կենտրոնը:**

- Կենտրոնում գործելու է բուժական ֆիզկուլտուրա, ջրային թերապիա, մերսում և լող, ինչպես նաև հոգեբանական ծառայություններ կարիքավոր խմբերի համար: Աշխատանքային մասնագիտական վերապատրաստում կանցնի Երևանում և կընդգրկի 6 մասնագետ՝ 2 լողի մարզիչ, 1 մարզիչ մարզասարքերով զբաղվողների համար, 1 բուժքույր, 1 բժիշկ և 1 հոգեբան:

**- Ովքեր ու ի՞նչ պայմաններով կարող են հաճախել կենտրոն:**

- Նախատեսված է, որ կենտրոնում կարիքավոր խմբերի համար ծառայությունները կլինեն անվճար, սակայն ծրագրի ավարտից հետո այն կշարունակի գործել զեղչերով: Կենտրոնի ծառայություններից կարող են օգտվել նաև համայնքի մյուս անդամները, որոնց դիմաց, սակայն պետք է վճարեն: Գումարները կծախսվեն կենտրոնի հետագա գործունեությունը կազմակերպելու համար:

# Եվրոպական խորհուրդ

- European Parliament
- European Council
- Council of the EU
- European Commission
- Court of Justice of the EU
- European Central Bank
- Court of Auditors

Եվրոպական խորհուրդը (European Council) սահմանում է ԵՄ քաղաքականության հիմնական ուղղությունը և առաջնությունները: Այն չի իրականացնում օրենսդրական գործառնություններ: 2009թ. դեկտեմբերի 1-ին՝ Լիսաբոնյան համաձայնագրի ուժի մեջ մտնելուն պես, այն դարձավ ԵՄ-ի յոթ կառույցներից մեկը: Եվրոպական խորհուրդում ընդգրկված են անդամ-երկրների նախագահները կամ կառավարության ղեկավարները՝ Եվրոպական խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի նախագահները: Եվրոպական խորհրդի աշխատանքներին մասնակցում է նաև ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցիչը: Եվրոպական խորհուրդում որոշումները կայացվում են փոխադարձ համաձայնությամբ (կոնսենսուսով): Որոշ դեպքերում, դրանք կայացվում են միաձայն կամ ծայրերի ճնշող մեծամասնությամբ՝ ըստ Համաձայնագրով նախատեսված դրույթների: Նախագահն ընտրվում է 2.5 տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրվելու իրավունքով: 2009 թ. դեկտեմբերի 1-ից Եվրոպական խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնում է Դերման Վան Բոնդարյո: Նախագահը Հանձնաժողովի նախագահի հետ համատեղ ապահովում է Եվրոպայի խորհրդի աշխատանքների նախապատրաստումն ու ընթացքը՝ Ընդհանուր հարցերով զբաղվող խորհրդի գործունեության հիման վրա, ինչպես նաև հաշվետվություն է ներկայացնում Եվրախորհրդարանին Եվրոպական խորհրդի յուրաքանչյուր նիստից հետո: Նախագահը նաև ներկայացնում է Եվրոպական խորհուրդն արտաքին քաղաքականության բնագավառում՝ իր իրավասությունների շրջանակներում և ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերում: Ամենաբարձր մակարդակի քաղաքական գործիչների ներկայությունն այս կառույցում որոշումներին հաղորդում է կարևորություն և բարձր օրինականություն:



## EU Inside/ԵՄ ներսից



**Լրիվ անվանումը՝** Դանիայի Թագավորություն:  
**Մայրաքաղաքը՝** Կոպենհագեն:  
**Պետական կառուցվածքը՝** սահմանադրական միապետություն:  
**Տարածքը՝** 43 098 քառ. կմ:  
**Բնակչությունը՝** Շուրջ 5,5 մլն մարդ:  
**Պետական լեզուն՝** դանիերեն:  
**Կրոնը՝** բնակչության 81 %-ը լյութերական է:  
**ԵՄ անդամակցությունը՝** 1973 թ.-ից:

## Դանիայի «Սեւ ադամանդը»

Դանիայում է գտնվում սկանդինավյան երկրների ամենամեծ գրապահոցը: Դանիայի՝ հսկայական սև ադամանդ հիշեցնող բազավորական գրադարանը խարսխված է կոպենհագենյան նավահանգստի կառամատույցի կողքին: Գրադարանի հավաքածուն ընդգրկում է ավելի քան 2,5 միլիոն կտոր գիրք, այդ թվում՝ Հանս Բրիստիան Անդերսենի ծեռագրերը: Այստեղ պահվում են նաև ամսագրեր, թերթեր, կորպորատիվ հրատարակություններ, ձեռագրեր և արխիվային տարբեր նյութեր, քարտեզներ, փորագրություններ, լուսանկարներ, նոտաներ, որոնք տպավորիչ թիվ են կազմում՝ 30 100 000 մուտք: Գրադարանը դեռևս 1648 թ.-ին հիմնել է Ֆրեդերիկ 3-րդը Եվրոպական գրականության ու փաստաթղթերի հսկայական բազայի հիման վրա, բայց միայն 1793 թվականից են նրա դռները բացվել հանրության համար: 1999 թ.-ին հին կառույցին հարակից կառուցվել է գրադարանի նոր շենքը, որը կառուցված է սև մարմարից և ապակուց: Շենքն իր տեսքի համար ստացել է «Սև ադամանդ» անունը:

## Լուսնային ժամացույց Գրինվիչ թերակղզում

Մառախլապատ Ալբիոնի խորհրդանիշերը ճանաչելի են աշխարհի բոլոր ծայրերում. լիվերպուլյան քառյակ, անգլիական քորոց, պրեմիում դասի մեքենաներ... շուտով դրանց կգումարվի ևս մեկը: 2012 թ. օլիմպիական խաղերի բացման նախօրեին Լոնդոնում կհայտնվի հսկայական լուսնային ժամացույց՝ Ալունա անունով: Կիսաբափանցիկ ապակուց պատրաստված համակենտրոն երեք շրջաններից բաղկացած այս կառույցն իր չափերով կգերազանցի Աթոլոնիենցին: Այն ունենալու է հինգհարկանի շենքի բարձրություն և 40 մետր լայնություն: Լուսնի լույսի արտացոլանքը մեծ շրջանի վրա ցույց է տալու լուսնի ֆազերը, միջին շրջանի վրա՝ լուսնային օրերը, իսկ փոքր շրջանը ցույց է տալու մակընթացությունն ու տեղատվությունը: Լուսնի հենց այս տեղաշարժերն էլ անվանվել են «լուսնային ժամ»: Ամենայն հավանականությամբ Ալունան կտեղադրվի Գրինվիչ թերակղզում՝ Millennium Dome-ի կողքին: Լուսնային ժամացույցն, ըստ հեղինակների, կփոխի մարդկանց ժամանակի զգացողությունը և կօգնի ավելի լավ հասկանալու մեր մոլորակի ռիթմը: Ժամացույցի հեղինակները հույս ունեն, որ Ալունան, ինչպես Բիգ Բենը, կդառնա Լոնդոնի խորհրդանիշը:



**Լրիվ անվանումը՝** Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:  
**Մայրաքաղաքը՝** Լոնդոն:  
**Պետական կառուցվածքը՝** պառլամենտական միապետություն:  
**Տարածքը՝** 244,820 քառ. կմ:  
**Բնակչությունը՝** շուրջ 62 մլն մարդ:  
**Պետական լեզուն՝** անգլերեն:  
**Կրոնը՝** բնակչության ճնշող մեծամասնությունը քրիստոնյա է:  
**ԵՄ անդամակցությունը՝** 1973 թ.-ից:

## Գարեջուր՝ իռլանդական ակցենտով

Իռլանդիայում հայտնվելիս պետք է անպայման այցելել «Իռլանդական փաթ», ուր իշխում է Իռլանդիայի ոգին: Այստեղ հնչող ջազը, բլյուզն ու ռոքը համադրվում են դեռևս 11-րդ դարից պահպանված ավանդական պարերի հետ: Այստեղ կարելի է ճաշակել նաև մուգ իռլանդական գարեջուր: Իռլանդիայում գարեջուրագործությունը երկար պատմություն ունի: Դեռևս 19-րդ դարի սկզբին ավելի քան երկու հարյուր գարեջուրագործարան կար երկրում: Հենց այստեղ է արտադրվում հանրահայտ «Guinness» գարեջուրը: 250-ամյա պատմություն ունեցող այս գարեջուրը ներկայումս արտադրվում է ավելի քան 35 երկրում և գրավում է Իռլանդիայի գարեջրի շուկայի 85 %-ը: Դեռևս հենավոր 1759թ. Արթուր Գինեսը 9 հազար տարի ժամկետով վարձակալել է Դուբլինում գտնվող Սենտ-Ջեյմս-Գեյտ կոչվող գարեջուրատները: Այդ օրվանից դառն մուգ գարեջրի ապրանքանիշն աշխարհում մեծ ճանաչում է սկսեց: Հարյուրամյակների ընթացքում անփոփոխ է մնացել գարեջուրը լցնելու տեխնիկան: Նախ՝ բաժակը պահելով 45 աստիճան թեթությամբ՝ լցնում են կիսով չափ, հետո ուղիղ վիճակում՝ անշտապ լցնում են մինչև վերջ: Երեսի կաթնագույն փրփուրի շերտը պետք է լինի ոչ ավել, ոչ պակաս՝ մի մատի հաստությամբ: Իռլանդական այլ հանրահայտ մուգ գարեջրերից են «Beamish & Crawford»-ը (1792թ.) և «Murphy's»-ը (1865թ.): «Murphy's»-ը ավելի թեթև և ավելի քաղցրավուն, մուգ գարեջուր է, ի տարբերություն «Beamish & Crawford»-ի, որն ավելի խիտ է և ավելի դառը: Անկախ գարեջրի համից՝ իռլանդական փաթի գարեջրի մթնոլորտը կողջունի ձեզ ամեն քայլափոխին Իռլանդիայում, ինչպես նաև աշխարհի շատ ու շատ երկրներում:



**Լրիվ անվանումը՝** Իռլանդիայի Հանրապետություն:  
**Մայրաքաղաքը՝** Դուբլին:  
**Պետական կառուցվածքը՝** հանրապետություն:  
**Տարածքը՝** 70, 273 քառ. կմ:  
**Բնակչությունը՝** շուրջ 4,5 մլն մարդ:  
**Պետական լեզուն՝** իռլանդերեն, անգլերեն:  
**Կրոնը՝** բնակչության ճնշող մեծամասնությունը կաթոլիկ է:  
**ԵՄ անդամակցությունը՝** 1973 թ.-ից:

- **Արևելյան գործընկերությունը** ԵՄ-ի քաղաքականությունն է, որի նպատակն է բարելավել հարաբերությունները ԵՄ-ի և Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի միջև: Այդ քաղաքականությունը առաջարկել են Շվեդիան և Լեհաստանը 2008 թ. ամռանը՝ Միջերկրածովյան միության ստեղծումից հետո:
- **Միջերկրածովյան միություն.** նախկինում՝ որպես Բարսելոնյան գործընթաց անվանումով հայտնի Եվրոպական-Միջերկրածովյան գործընկերությունը կրկին մեկնարկել է 2008 թվականին Փարիզում գումարված Միջերկրածովյան վեհաժողովի ժամանակ՝ որպես Միջերկրածովյան միություն: Դա ԵՄ քաղաքականություն է, որն ուղղված է հարավային հարևան երկրներին և նպատակ ունի ամրապնդել կապերը ԵՄ-ի և իր գործընկեր երկրների միջև՝ մինևույն ժամանակ խրախուսելով մերձեցումը միջերկրածովյան երկրների միջև:
- **Ասոցացման համաձայնագիրը** ԵՄ և երրորդ աշխարհի երկրների միջև համապարփակ համաձայնագիր է, որը միտված է նրանց միջև համագործակցությունը առավել զարգացնելուն: Նմանատիպ համաձայնագրերը սովորաբար վերաբերում են քաղաքական, առևտրային, տնտեսական, անվտանգության, մշակութային և այլ կապերի զարգացմանը:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia  
 21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.  
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia  
 The Newsletter prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում  
 Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց 21, (մուտքը՝ Պոռչյան փողոցից)  
 Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia  
 Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը